

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝

Մասնակցե՛ք, Խօսե՛ք, Լսե՛ք եւ ... Գործե՛ք

Գանատայի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդի կազմակերպած երիտասարդական երկօրեայ համագումարը՝ «Հայ Քրիստոնեայ Երիտասարդը, Ընտանիքը եւ Եկեղեցին» նիւթով, տեղի ունեցաւ 20-21 Մարտի շաբաթավերջին, Camp IAWAH-ի («In All your Ways Acknowledge Him», Սաղմոս 3:5,6), Քինկսթընի հիւսիսը գտնուող լիճի մը ափին, որուն մասնակցեցան շուրջ 45 երիտասարդներ՝ Թորոնթոյէն, Մոնթրէալէն, Լաւալէն, Քէմպրիճէն եւ Սէնթ Քաթրինզէն:

Թորոնթոյի Հայ կեդրոնէն եւ Մոնթրէալի Ազգային Առաջնորդարանէն մեկնած փոխադրակառքերը հաճելի զուգադիպութեամբ մը իրարու հանդիպեցան Ճիշդ այն խաչմերուկին, ուրկէ կը սկսէր բանակավայրի պատկանող յատուկ նեղ ճամբան ու այսպէս ետեւ ետեւի միաժամանակ հասանք բոլորս:

Մեզի տրամադրուած էր երեք յարկերու վրայ տարածուող IAWAH համալիրի մէկ շէնքը, որուն գետնայարկը կը գտնուէր մեր ժողովասրահը, իսկ երկրորդ յարկը ճաշասրահը, որոնք իրենց լայն ու ամբողջ սրահի երկայնքը տարածուող պատուհաններով, ստեղծած էին այն տպաւորութիւնը, որ համագումարը կը կատարուէր բնութեան գիրկը: Լիճի խաղաղ մակերեսը ու շրջապատի գեղատեսիլ խաղաղ բնութիւնը նաեւ զարնան առաջին ծլարձակումները կը բնորոշէին կեանքի վերընձիւղումը:

Զգացական վառ մթնոլորտի մը մէջ Տէրունական աղօթքով բացուած յայտարարուեցաւ համագումարը, եւ Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդի (ՔԴԽ) ատենապետ՝ Զաւէն Զօգազլեան, բարի գալուստի իր խօսքին ընդմէջէն ներկայացուց համագումարի երեք դասախօսները՝ Սէնթ Քաթրինզի հոգեւոր հովիւ եւ Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդի վարիչ՝ Հոգեշնորհ Հայր Գեղարդ վրդ. Քիւսպէքեանը, հոգեբուժ եւ Նիւ Ճրբզիի Մուրբ Վարդանանց եկեղեցւոյ սարկաւազ՝ Բժկ. Վահան Գույումձեանը, ՔԴԽ-ի քարտուղար եւ պատմաբան՝ տիկին Սօսի Առաքելեանը: Ապա շարունակելով իր ներկայացումը, ան գնահատական խօսքերով ներկայացուց ՔԴ Խորհուրդի մնացեալ անդամները՝ Սառա Խշիշեանը, Մարիա Թոգաթլեանը, Սօսի

Ապոյեանը, Խաչիկ Սրկ. Շաննագեանը, Մելքոն Քարկոցեանը եւ Կիրօ Ճիպինեանը:

Կազմակերպիչ Խորհուրդը ծանօթացնելէ ետք, Չաւեն հրաւիրեց Հայր Գեղարդը իր սրտի խօսքը տալու մասնակիցներուն: Հայր Սուրբը նախ յիշեցուց համագումարի նշանաբանը՝ «*Մասնակցէ՛, Խօսէ՛, Լսէ՛ եւ ...Գործէ՛*» ու ապա խնդրեց իւրաքանչիւրէն ներկայացնել ինքզինք, ապա քաջալերեց բոլորին որ ընկերային մտերմիկ մթնոլորտի մը մէջ անցնեն գալիք երկու օրերը:

Կէսօրը անց էր երբ բոլորս ուղղուեցանք համալիրի միջնայարկը՝ ճաշասրահը: Կեդրոնի պատասխանատուն ընդհանուր ապահովութեան նշումներ ընելէ ետք, բացատրեց ընդհանրապէս հաստատութեան կարգ ու կանոնը եւ մասնաւորաբար ճաշասրահինը ու հրաւիրեց հոգեւոր հովիւր օրհնելու սեղանը, բացատրելով որ անհրաժեշտ է իւրաքանչիւր ճաշէ առաջ աղօթելը: Տէր Գառնիկ Քին. Գոյունեան, որ մեզի միացաւ այդ առաւօտ, օրհնեց սեղանը:

Շաբաթ յետմիջօրէին, ընդհանուր ծանօթացումէն եւ քիչ մը հանգստանալէ ետք՝ Բժկ. Վահան Գոյումձեան խօսեցաւ հիւսիսային Ամերիկայի տարածքին երիտասարդներու ընդհանուր հոգեբանութեան մասին եւ մասնաւորաբար ծանրացաւ անոնց դիմագրաւած մարտահրաւերներուն վրայ: Նկատելի էր երիտասարդ սերունդին հետաքրքրութիւնը, որոնք լուր ու կեդրոնացած հետեւեցան անոր խօսքերուն ու բացատրութիւններուն: Հաճելի էր տեսնել անոնց անհատական խօսակցութիւնները Բժիշկ Վահանին հետ, դասախօսութեան աւարտին եւ համագումարի մնացեալ ժամանակամիջոցին, որոնք անհատաբար կամ փոքր խումբերով գրոյցի մէջ էին բժիշկին հետ:

Դադարէ մը ետք, նախ Հայր Գեղարդ բացատրեց Արեւագալի «Յարեւելից» եւ Հսկումի «Նայեաց Սիրով» շարականներու իմաստը եւ ապա Խաչիկ սարկաւազ Շաննագեան, ընկերակցութեամբ Հարօ Դանիէլեանի՝ ջութակ եւ Վիզէն Գրիգորեանի՝ դաշնամուր (keyboard), մասնակիցներուն սորվեցուց շարականներու երգեցողութիւնը, որ հոգեպարար խանդավառութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:

Երկրորդ դասախօսութիւնը կը վերաբերէր «Հայ Ընտանիք»ին, որ ներկայացուց Տիկին Սօսի Առաքելեան: Տիկին Սօսի վեր առաւ հայ ընտանիքի կազմաւորման ու զարգացման պատմութիւնը, զայն համեմատելով նաեւ ներկայի համաշխարհային պատկերին հետ: Հիմնականօրէն ան շեշտեց հայ կնոջ դերը հայ ընտանիքի գոյատեւման մէջ, նշելով թէ՛ «Հայ կինը հայ ընտանիքին օճախը վառ պահողն է. ան է որ ընտանիքը կը շէնցնէ կամ կը քանդէ»: Իբրեւ իրապաշտ ու գործնական վկայութիւն դասախօսը հրաւիրեց

Լաւալի Սուրբ Գեորգ եկեղեցւոյ դպրաց դասի քարտուղար՝ պատանի Սերոբ Թաշճեանը (13 տարեկան), որ տայ իր պրպտումներու արդիւնք եղող խորհրդածութիւնները, թէ հայ մանուկը հայ դպրոց եւ հայ եկեղեցի առաջնորդելու գործին մէջ ծնողքներու դերակատարութիւնը հիմնական ու կարեւոր ազդակ է: Մասնակիցները հետաքրքրութեամբ լսեցին հայ ընտանիքի հասկացողութեան ու արդի գարտուղի գաղափարներու համեմատութիւններուն:

Երեկոյեան ժամերը մօտեցած ըլլալով, պատրաստուեցանք հսկումի արարողութեան: Խաչ մը, խնկաման մը, եւ երկու մումեր... շարժական խորանին պատրաստութեամբ, Հայր Գեղարդ առաջնորդեց սարկաւազները Հսկումի արարողութեան, որուն նաեւ հետեւեցան եւ իրենց մասնակցութիւնը բերին բոլոր ներկաները, բաժին վերցնելով աղօթքներու ու շարականներու երգեցողութեան: Նիւ Ճըրզիի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ Կիրակնօրեայի տեսչուհին եւ ԲԺԿ. Գույումճեանի շնորհալի տիկինը՝ Մակի Գույումճեան, իր մենակատարումներով առաւել փայլք տուաւ հսկումի արարողութեան:

Փառաւոր ընթրիքէ մը ետք, իրիկնային ժամերը շարունակուեցան զանազան տեսակի ժամանց-խաղերով ու զուարճութիւններով: Մինչ կարգ մը երիտասարդներ խումբեր կազմած սկսան խաղալ առարկաներ փնտռելու (scavenger hunt) խաղը, ուրիշներ երկու խումբի բաժնուած ոտնագնդակի (soccer) մրցում մը սկսած էին IAWAH-ի մարզադաշտին մէջ, տակաւին ուրիշներ ping-pong-ի մրցաշարք մը, բուն էր պայքարը Խաչիկ սարկաւազին ու Հայր Գեղարդին միջեւ, սակայն, պէտք է ընդունիլ որ ախոյեանը՝ Հայր Գեղարդն էր: Կային նաեւ քառեակներ, որոնք փոխն ի փոխ, խմբուած babyfoot-ի սեղանին շուրջ կը փորձէին իրենց ճարպիկութիւնը ցոյց տալ: Բոլորն ալ բարձրաձայն բացականչութիւններով, կատակներով ու խնդուքներով, մասնաւորաբար յաղթական կանչերով աշխոյժ մթնոլորտ մը կ'ապրէին:

Խաղերէն յոգնած, լճափին, խարոյկի ճարճատող կրակին շուրջ խմբուած ու անոր տաքութեամբ, ընկերային մթնոլորտը կը հասներ իր գագաթնակէտին. ազգային ու ժողովրդային խմբերգները իրար կը յաջորդէին. հայերէն աւանդական երգերը կը հնչէին...: Կրակը մարելու մօտ էր, երբ ցուրտ օդը ստիպեց մեզ ուղղուելու ժողովասրահ, ուր զանազան խաղերով, երգերով, կատակներով, ընկերային զուարթ մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ ուշ ժամեր: IAWAHի պատասխանատուները մեզի տրամադրած էին սուրճ, թէյ, hot chocolate, marshmallow եւ պտուղներ: Քնանալու տրամադրուած ժամերուն տակաւին սենեակներէն կը լսուէր խօսակցութեան բարձր ձայներ: Առաւօտուն արդէն իսկ կը պատմէին թէ խօսակցութիւնները կը վերաբերէին նախորդ օրուան դասախօսութիւններուն առթած մտածողութիւններուն:

Կիրակի առաւօտ, բնութիւնը մեզ բոլորս արթնցուց հաճելի անակնկալով մը... արդարեւ այս տարուան բարեխառն օդի պատճառաւ երբ ամենուրեք ձիւնի յետքն անգամ չկար... գարնան առաջին օրը, ձիւնը բարակ շղարշի պէս պատած էր դաշտերն ու ամբողջ բնութիւնը, կարծես կ'ուզէր դէմ կենալ գարնանամուտին... սքանչելի էր տեսարանը. մէկ օր առաջուան տժգոյն խոտերը, մերկ ծառերը, դաշտին մէջտեղի միայնակ նստարանը ու հեռուն լճափին խոճիթանման տնակին տանիքը, հագեր էին կարծես սպիտակ մետաքսեայ բարակ կտոր մը, ձմեռն էր որ իր վերջին փորձով կարծես բնութեան կը նուիրէր այդ գեղեցիկ սպիտակ հագուստը...: Արեւագալի մեր արարողութիւնը նոր վերջացած էր, երբ այդ բոլորը հալեցաւ գնաց...երագի նման:

Նախաճաշէն ետք, մենք բոլորս ունկնդրեցինք Հայր Գեղարդ Քիւսպէքեանի «Ո՞վ է Եկեղեցին» դասախօսութիւնը, ուր Հայր Սուրբը նշեց, թէ եկեղեցին միայն շէնքը չէ, այլ ժողովուրդը եւ անոր համար է որ ինք դիտմամբ կ'ըսէ «Ո՞վ է եկեղեցին» եւ ո՛չ թէ «Ի՞նչ է եկեղեցին»: Հայր Սուրբը մեր եկեղեցույ հայրերէն եւ աստուածաբաններէն մեջբերումներով նշեց, թէ՛ Եկեղեցույ գործունէութիւնը մէկ կողմէ հոգեւոր-դաստիարակչական, իսկ միւս կողմէ պատերազմական բնոյթ ունի, որ կրաւորականութենէն շատ հեռու է եւ կը պահանջէ պայքար չարին դէմ, ի սէր բարիին ու լաւին հաստատման: Անառակ որդիի նորօրեայ բնութագրումով ան ներկայացուց մերօրեայ եկեղեցիին ունենալիք դերը երիտասարդութեան դաստիարակութեան եւ կեանքին մէջ:

Նոյն պահուն, մեզի միացաւ Գանատայի Առաջնորդ Սրբազանը՝ Գերաշնորհ Խաժակ Արք. Յակոբեանը, որ ունկնդրեց երիտասարդներուն պատրաստած աշխատանոցներու եզրակացութիւնները, անոնց հարցումները, պատասխանեց անոնց հարցումներուն եւ բացատրութիւններ տուաւ անոնց մտահոգութիւններուն ու վերջաւորութեան իր հայրական ոճով խրատեց, խորհրդածեց ու բացատրեց երիտասարդներուն թէ Հայց. Առաքելական եկեղեցին ճանչնալը կարեւոր է հայ երիտասարդին համար, որովհետեւ հոն է որ երիտասարդը պիտի գտնէ իր հոգիին փնտռածը առանց ազդուելու օտար վարդապետութիւններէ ու այս օրերու նորոյթ այլեւայլ անաստուածեան մտածողութիւններէ: Ան իր գնահատական խօսքը ուղղեց Խորհուրդին, նման համագումարի մը յաջող կազմակերպման համար:

Ճաշէն ետք, ճաշարահի մէկ անկիւնը, կրակարանին մօտ, Լաւալի ու Մոնթրէալի երիտասարդներուն փոխադրակառքին մէջ կազմած երգչախումբը հաւաքուեցաւ ու ջութակի ընկերակցութեամբ հրամցուց փունջ մը հայկական ազգային ու ժողովրդական երգեր... Խումբին անմիջապէս միացան միւս

շրջաններու ներկայացուցիչներն ալ. Սրբազան հայրը, մեծ հրճուանքով ու գոհունակ սրտով, մերթ ընդ մերթ կ'ընկերանար երիտասարդներուն:

Բաժանման պահը մօտեցած էր. հաւաքական վերջին ճաշէն ետք, բնութեան մէջ յիշատակի խմբային նկարով, հրաժեշտի պահը հնչեց... միասնաբար Օնթարիոյի եւ Քէպէքի երիտասարդ խումբերը անգամ մը դարձեալ աղօթեցին «Հայր Մեր»ը ապա «Երբոր Բացուին Դռներն Յուսոյ»ի երգեցողութեամբ բաժնուեցան իրարմէ այն յոյսով, որ մօտ օրէն դարձեալ պիտի հանդիպին իրարու: